Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5013-5016

281.61
F-92

M.C. 56

Printed in Turkey

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՏՊԵԱԼ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

2004

Հ81.6
Ս-93

ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԻՆՉՊԷՍ ԿԸ ՀԱՒԱՏԱՑ ԵՒ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՅՈՑ

ՌԱՄԿԱԿԱՆ ՈՃՈՎ ՀԱՐԱԴՐԵՑԱՒ ՆՈՐԱՀԱՍԱԿ
ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ՈՐ ՀԵՂՏ ՀԱՍԿԸՆԱՆ

Ի ԴՊՐԱՏՈՒՆՆ ՕՐԹԱԳԻՒՂԻ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ
ՏԵԱՌՆ ՅԱԿՈԲԱՅ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՏՊԵԼՈՒ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ
ԱՊՈՒՉԵԽՅԻՈՅ

1851 = ՌՅ

11014-242



Կամիս լսել դու քրիստոս Հեայ.
Զայս Ի մահի քում հաւատա քեայ։

445
40

Printed in Turkey

ՀԱՐՑ

Դու Ի՞նչ ես։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Աստուծոյ շնորհօքն քրիստոնեայ եմ։

Ո՞րով եղեր ես քրիստոնեայ։

Սուրբ աւազանին ծննդեամբն, ուր մը-կրտեալ եմ՝ յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ։

Կատարեալ քրիստոնեայն ո՞րն է։

Կատարեալ քրիստոնեայն այն է, որ քի՛հրամանը կը կատարէ, սուրբ եկեղեցւոյ պատուիրանքը կը պահէ։

Քրիստոնէին նշանը ի՞նչ է։

Քրիստոնէին նշանը, մէյմը՝ երեսը խա-

չակնքելն է. և մեյմընալ՝ իւր ընկերը սիրելն է։

Ի՞նչպէս պէտք է խաչակնքել։

Ա. յապէս ըսելով. յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ։

Քանի՞ բան պէտք է քրիստոնէին, որ փրկութիւն գտնայ՝ և յարքայութիւն երթայ։

Ա. Երկու բան. հաւատք, յոյս, սէր, և բարի գործ։

Քանի՞ հարկաւոր բան կայ քրիստոնէին, որ անոնց պիտի հաւատայ։

Ա. Երկու. մէկը՝ սուրբ երրորդութիւն խորհուրդը, թէ աստուած մէկ է, և երեք անձն ունի. հայր և որդի և սուրբ հոգի։ Ա. մէկալ՝ մարդեղութեան խորհուրդը՝ թէ որդին աստուած աշխարհք եկաւ, մարմին առաւ, մեզ նման մարդ եղաւ. և իրեն չարչարանքովը և մեռնելովը՝ մեզի սատանային ձեռքէն ազատեց։

Ո՞ր բանի պիտի յուսանք։

Այս երկու բանիս. մէկը՝ թէ քանի կենդանի եմք, աստուած իւր շնորհքը մեզի կուտայ. և մէկալը՝ թէ երբ որ մեռանիմք, աստուած իւր արքայութեան փառքը մեզի կուտայ։

Ո՞վ պիտի սիրեմք։

Մէյմը աստուած, և մէյմը մեր ընկերը։

Ի՞նչ բարեգործութիւն պիտի գործեմք։

Աստուծոյ հրամանը կատարեմք. սուրբ եկեղեցւոյ պատուիրանքը տեղը տանիմք. աղօթք ընեմք. պաք պահեմք. և ողորմութիւն տամք։

Աստուած ի՞նչ է։

Ամէն ստեղծուածներուն ստեղծողն է. ինքն հիչ մէկէ մը ստեղծուած չէ. երեք անձն և մի բնութիւն է. ամենաբարի է. ամենազօր է. ամենատես է. ոչ սկիզբն ունի, և ոչ վերջ ունի. յաւիտենական և անփոփոխելի է։

Աստուած ո՞ւր է։

Աստուած ամէն տեղ է։

Հապա ի՞նչու երկինքն է կըսեն։

Երկինքը՝ ամէնէն բարձր և պատուաւոր տեղն է. հրեշտակները և սրբոց հոգիքը հոն են. և արքայութիւնը աստուած այն տեղը սահմաներ է. անոր համար աստուած յերկինս է կըսեմք. զերծ ամէն տեղ է։

Հայր աստուա՞ծ է։

Այո՛ աստուած է։

Որդին աստուա՞ծ է։

Այո՛ աստուած է։

Հոգին սուրբ աստուա՞ծ է։

Այո՛ աստուած է։

Անանկ է նէ, երեք աստուած կը լինին։

Ոչ՝ ոչ՝ երեք աստուած, այլ մի՝ ՝ծ է. զերծ երեք անձինքն մէկըզմէկէ բաժանված չեն. այլ մէկ բնութիւն, և մէկ աստուածութիւն ունին։

Կրնաս մէկ օրինակ մը տալ ինձ, որ խելքս հասնի։

Բրեզի օրինակ ըլլայ արևն. ահա նախ ինքն արեգակն. երկրորդ՝ լոյսն. երրորդ՝ տաքութիւնն. որ այս երեքս մի են. զերբ բաժանեալ չեն։

Ցաւ՝ ակին ջուրն. ակէն վազած գետին ջուրն, և աւազանի մէջ լը ցուած ջուրն, ուրիշ ուրիշ են, սակայն մէկըզմէկէ բաժանված չեն. երեքն մէկ ջուր են։

Կրնաս ուրիշ պարզ օրինակ մը ևս տալ ինձ, որ աղէկ մը տեղեկանամ։

Ահա տամ քեզ՝ մէկ հեշտ հասկընալու, և յայտնի օրինակ մի։

Նայէ այբ գիրը (ա), որ երեք ճիւղ կամ սիւն՝ ունի. ամմէն մէկ սիւն կատարեալ այբ է. մէկըզմէկէ աւելի և պակաս զօրութիւն չունին. և երեք սիւնքն մէկ տեղ գոլով՝ մէկ այբ կըսվի, և ոչ երեք այբ։

Այսպէս հայր աստուած, որդին ՝ած, հոգին սուրբ աստուած, երեք անձինք են, այլ երեք աստուած չեն, մէկ ՝ած

Է. մեկ զօրութիւն և արարչութի ունին։

Ինչու կը խաչակնքեմք զմեզ։

Ա՝էյմը այս է, թէ որովհետև սուրբ խաչն՝ քրիստոսի նշանն է. քրիստոսի նը-շանը մեր վերայ ունենալով՝ յայտնի կը լինիմք թէ քրիստոնեայ եմք՝ և քրիստոսի ծառայ. և մեկալը՝ որ խաչակնքած ժա-մանակնիս՝ սուրբ երրորդութեան անու-ն կը յիշեմք. և սասոլ սուրբ երրորդու-թեան հաւատանիս, և երկրպագութիւն ընեընիս կիմացվի։

ԳԼՈՒԽ · Բ

Հաւատոյ հանգանակը գիտենս։

Ա. յո գիտեմ. Հաւատամ՝ ի մի աստուած՝ ի հայրն ամենակալ. և այլն։

Այս հանգանակը քանի մասունք կամ աստիճան ունի, և ինչ ըսաւ։

Տան երկու աստիճան ունի, և սուրբ առաքեալները՝ երուսաղէմ քաղաքը՝ սուրբ սիոն վերնատունը սահմանեցին։

Ո՞րն է առաջին աստիճանն, և այն ո՞ր առաքեալ ըսաւ։

Առաջին աստիճանն է այս։ Հաւատամ՝ ի մի աստուած՝ ի հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի։ Այս զայս՝ պետրոս առաքեալը ըսաւ։

Մեկնեմ որ իմանամ։

Այս կը հաւատամ՝ թէ մէկ է աստուած. և այս մէկ աստուածութեան առաջին անձն հայր ամենակարօղն է, որ երկինքը և երկիրս, և զամ ինչ որ կայ նէ, իւր ամենակարողութիւնը յոչնչէ ստեղծեց։

Ո՞րն է երկրորդ աստիճանն, և ո՞ր առաքեալ ըսաւ։

Երկրորդ աստիճանն է այս։ Այս՝ ի մի տէր Յիսուս Քրիստոս՝ որդին աստուծոյ։ Այս այս ըսաւ Յովհաննէս աւետարանիչն։

Մեկնեմ որ իմանամ։

Այս կը հաւատամ՝ թէ Յիսուս Քրիստոս հօր միայն որդի է. և ինչպէս՝ հայր ամենակալ է, երկնի և երկրի ստեղծող է. Յիսուս Քրիստոս ալ՝ հօր միայն ամե-

նակալ է , երկնի և երկրի արարիչ է։

Ո՞րն է երրորդ աստիճանն , և ո՞վ ըսաւ։

Երրորդ աստիճանն է այս։ Ա՛ստուծոյ , Հարցոյ , Ծնաւ՝ կուսէն Մարիամայ արբոյ կուսէն հոգւոյն արբոյ։ Եւ այս ըսաւ յովհաննէս աւետարանչին եղբայրն՝ Յակոբոս առաքեալն։

Մեկնիչ որ իմանամ։

Այս կը հաւատամ՝ թէ յիսուս քրիստոս ճշմարիտ աստուածը՝ մեզի փրկելու համար աշխարհք եկաւ . հոգւոյն արբոյ զօրութեամբը՝ սուրբ կոյս մարիամ ածածինէն ծնաւ . մեղքէն 'ի զատ մարդկային բոլոր բնութիւնը առաւ . հոգւով՝ մտօք՝ մարմնով՝ ճշմարիտ և կատարեալ մարդ եղաւ . ոչ ածութիւնը 'ի մարմին փոխվեցաւ , և ոչ մարմինը յածուն փոխվեցաւ։

Ո՞րն է չորրորդ աստիճանն , և ո՞վ ըսաւ։

Չորրորդ աստիճանն է այս։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ։ Եւ այս ըսաւ անդրէաս առաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Այս կը հաւատամ՝ թէ Յիսուս Քրիստոս մեզի այնքան սիրեց, որ դժոխքին տանջանքէն՝ և սատանայի ձեռքէն մեզի ազատելու համար, հրէից ազգէն չարչարվեցաւ՝ պոնտացի պիղատոս դատաւորին իշխանութեան ժամանակը, և սուրբ խաչափայտին վերայ մեռաւ։ Այս ժամանակը Քրիստոսի հոգին ու մարմինը մէկ ըզմէկէ բաժանվեցան. ըսքին Քրիստոսի աստուածութիւնը ոչ հոգիէն բաժանվեցաւ, և ոչ մարմինէն։

Օրինակ մը տուր որ խելքս հանի։

Դեզ օրինակ ըլլայ աղեղը, այսինքն՝ օխին եայը. թէ ասոր թելին մէջ տեղէն կըտրես, այն թելն՝ մէկըզմէկէ կը բաժնվի. ըսքին աղեղը երկու կտոր թելէն ալ չի բաժանվիր։ Ահա թելը կը նշանակէ Քրիստոսի մարմինը և հոգին, որ մահուան ժամանակը բաժանվեցան. աղեղը կը նշանակէ Քրիստոսի ճածութիւնը, որ ոչ հոգիէն բաժանվեցաւ, և ոչ մարմինէն։

Ո՞րն է հինգերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Հինգերորդ աստիճանն է այս. Լչ ի Ժ՚ոխա։ Լու այս ըսաւ Թովմաս առաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Լա՛ կը հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս երբ որ խաչին վերայ մեռաւ, մարմնովը նորափոր գերեզմանի մէջ թաղվեցաւ, և հոգւովը դժոխքը իջաւ. դժոխքը քակեց. և այն զընտանին մէջը եղեալ սուրբ նահապետներուն, և մարգարէներուն, և արդարներուն հոգիքը ազատեց։ Ուստի անոնք որ ադամայ սկզբնական մեղացը համար այն բանտին մէջը արգելված էին՝ Քրիստոսի չարչարանքովը և մահուամբը փրկեցան, և երկինքը ելան։

Ո՞րն է վեցերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Ո՝ ՀՎեցերորդ աստիճանն է այս. Յերրորդ օրն յարուցեալ ի մեռելոց։ Լու այս ըսաւ Բարդուղիմէոս առաքեալն։

Մեկնէ որ խմանամ։

Այս կը հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս երեք օրէն յետոյ՝ շաբաթ գիշերը որ կիրակի կը լուսանայր՝ իւր աստուածային զօրութեամբն յարութիւն առաւ անապական մարմնով։

Ո՞րն է եօթներորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Եօթներորդ աստիճանն է այս. Հոմէարյա՝ յերկինս, և նոպաս ընդ ամենայն հոգի։ Այս ըսաւ վիրիպոս առաքեալն։

Մեկնէ որ խմանամ։

Այս կը հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս յետ քառասուն աւուր յարութեանն՝ իւր ճշմարիտ կարողութեամբն երկինքը համբարձաւ. և հոր աստուծոյ աջ կողմը նստաւ, որոյ հետն հաւասար է փառաւոր և իշխանութեամբ. և իւր հաւատացեալսը միշտ օգնութիւն կընէ։

Ո՞րն է ութերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ.

Ութերորդ աստիճանն է այս. Գալոց է

Դարձեալ գիրենդանիս և գիրենալոյ։ Լուսաւորչայ ասացեալ մատթէոս աւետարանիչն։

Մեկնեալ որ իմանամ։

Լոյս կը հաւատամ, թէ յիսուս քրիստոս աշխարհքիս վերջը դատաստան պիտի գայ անթիւ հրեշտակներով. արդարները յաջ կողմը պիտի կանգնեցրնէ, և մեղաւորները ձախ կողմը։ Արդարները արքայութիւն կը տանի, որ յաւիտենական փառք ու պատիւը հոգւով մարմնով վայելեն, և մեղաւորները և անհաւատները դժոխքը կուղարկէ, որ յաւիտենական պատիժ և տանջանք կրեն։

Ո՞րն է ինեերորդ աստիճանն, և ո՞վ ասաւ։

Ինեերորդ աստիճանն է այս. Հոգին սուրբ։ Հոգին սուրբ։ Լուսաւորչայ ասացեալ յակոբոս ալփեանն։

Մեկնեալ որ իմանամ։

Լոյս կը հաւատամ Հոգին սուրբ. որ հօր և որդւոյ էակից և համագոյ է։ Լուսինչպէս հայր և որդի անեղ և կատարեալ

են , նոյնպէս և հոգին սուրբ աստուած անեղ և կատարեալ է . և մեք քանի որ յայս աշխարհս եմք , իւր շնորհքը մեզի կուտայ , որ փրկութեան հասնիմք։

Ո՞րն է տասներորդ աստիճանն , և ո՞վ ըսաւ։

Տասներորդ աստիճանն է այս . Ի սուրբ Լուսաւորիչ եկեղեցի։ Այս այս ըսաւ սիմոն կանանացին։

Մեկնէ որ իմանամ։

Այս կը հաւատամ 'ի սուրբ կաթուղիկէ եկեղեցին։ Ի՞նչին իմացիր , որ կաթուղիկէ եկեղեցին՝ չէ այս քարաշէն և փայտաշէն եկեղեցին , որ կըսվի Նի-Բոլան եկեղեցի . այլ ամենայն քրիստոնէից ժողովն է , որ կըսվի վինոորեալ եկեղեցի։ Որ ամենքն 'ի միասին մէկ մարմին են մեր գլխոյ . և այն գլուխն է տէրն մեր յիսուս քրիստոս . և մէկ հաւատք , մէկ մկրտութիւն , և մէկ սրբարար շնորհք ունին ամենքն և միմեանց հետ հաղորդութիւն կունեն աղօթքով և բարի գործով։ Ուստի

կաղօթեմք յարև ագալի ժամուն՝ ասելով.
Յարևելէյ մինչև յարևմուտս ընդ համ փ-
ղիս խրիսոնէութիւն, ուր և կարդան զանուն
փառաւն սրբութիւամբ. փէր աղօթիւ նոյա և
բարեխօսութիւամբն մեզ ողորմեսցի։ Լու այս
ուղղափառ եկեղեցին ունի այս չորս
արտաքին նշանս, այսինքն, մի՝ սուրբ՝
կաթուղիկէ և առաքելական։ Ինչպէս կը
քարոզէ եկեղեցին. Աղաչեսցուք զամենա-
կալն ասպուած. վասն միայնոյ սուրբ՝ կա-
թուղիկէ՝ և առաքելական եկեղեցւոյ։

Ո՞րն է տասանևմէկերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Տասն և մէկերորդ աստիճանն է այս.
Ի Խոր-Վիրապ մեղայ։ Լու այս ըսաւ Թա-
դէոս առաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Լս կը հաւատամ՝ թէ այս սուրբ եկե-
ղեցւոյ մէջ՝ մեղաց թողութիւն կըլլայ.
զերկ ո՞վ որ իւր մեղքը զղջայ, խոստով-
վանի, և ապաշխարէ, և քրիստոսի սուրբ
մարմնոյ և արեանն հաղորդի, հարկաւ

թողութիւն կը գտնայ։ Եւ այս իշխանութիւնը աստուած տուաւ քահանայից, որ զղջացող մեղաւորին արձակում և թողութիւն տան։

Ո՞րն է տասներկուերորդ աստիճանն, և ո՞վ ըսաւ։

Տասն երկու երորդ աստիճանն է այս. Լ՝ յարո՝ Մարմնոյ, Ի գոգոպանն յա՝ Իպենիս։ Եւ այս ըսաւ Մատաթիա առաքեալն։

Մեկնէ որ իմանամ։

Այս կը հաւատամ, թէ դատաստանին օրն՝ մեռեալներն իւրեանց մարմնովն յարութիւն կառնեն. բարի քրիստոնեայները յարքայութի կերթան, և անհաւատները և չար քրիստոնեայները դժոխքը։

4445
40

ԳԼՈՒԽ · Գ

Ո՞վ ստեղծ զքեզ, և վասն ի՞նչ պատճառի։

Աստուած ստեղծ զիս. որ քանի կենդանի եմ, ՝ի ծառայութիւն ընեմ, ՝ի պաշտօն մատուցանեմ. և երբ որ մեռանիմ, արքայութեան փառացը հասնիմ։

Ի՞նչով կըլլայ աստուծոյ ծառայութիւն ընել։

Այս երկու բանովս կըլլայ. մէյմը՝ որ աստուծոյ վախը և երկիւղը սրտերնուս մէջը միշտ կունենանք. և մէկալ՝ այ պատուիրանքը սիրով և զգուշութեամբ կը պահենք։

Ի՞նչով կըլլայ աստուածպաշտութիւն ընել։

Այս երեք բանովս կըլլայ. նախ՝ ներքին մտօք և հոգւով այ մեծութեանը կը հաւատամք։ Երկրորդ՝ արտաքին կերպով՝ ահիւ և դողութեամբ այ ծունր կը դնենք, երկրպագութիւն կընենք։ Երրորդ՝ սուրբ պատարագ կը տեսնանք, այ աղօթք և աղաչանք կը մատուցանենք։

Աղօթքն ինչ է։

Աղօթքն է, որ միտքըդ առ աստուած կը վերցունես, քեզի ըրած բարերարութենէ համար շնորհակալ կըլլաս, և արժանաւոր բան մի կը խնդրես։ Եւ այս երկու կերպ է. մէկն միայն սրտիւ և մտօք, և կըսվի մտաւորական աղօթք։ Եւ մէկը՝ բերանով

և ձայնիւ, և կըսվի յայնաւոր աղօթք։

Ինչու համար աղօթքնիս երբեմն ընդունելի չի ըլլար։

Նրեք պատճառ ունի. մէկն այն է, որ հաստատուն հաւատով և յուսով չենք խնդրէր, այլ երկմտութեամբ և թերահաւատութեամբ, այսինքն՝ շի-պէտով։ Երկրորդ՝ անպետ և անարժան բան կը խնդրեմք. ինչպէս՝ գեղեցիկ տուն. չափէն աւելի ստակ և ապրանք, և այլն։ Ուստի կըսէ յակոբոս առաքեալն. խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք։ Նրրորդ՝ մեր խստասրտութեան համար է. զէրէ մենք երբ որ անգութ և քարասիրտ կըլլանք, մեզի աղաչողին ձայնին չենք լսեր, ուրեմն մեր ձայնը ինչպէս պիտի լսէ։ Ուստի եթէ մենք անյիշաչար ըլլանք, մեր ընկերին յանցանքը ներենք, ուրեմն ալ մեր յանցանքը կը ներէ։ Այս է որ կըսենք տէրունական աղօթքին մէջը. Թողու մեզ զպարտիս մեր, որպէս և մեք ընդ-մեր մերոց պարտականաց։

Ասա տէրունական աղօթքն, որ լսեմ։

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողուցուք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն, և փառք յաւիտեանս, ամէն։

Ինչո՞ւ տէրունական աղօթք կըսվի։

Օ՛էրէ քրիստոս տէրը սորվը ցուց մեզի այս աղօթքը. և ամմէն աղօթքներէն աւելի մեծ և զօրաւոր է. անոր համար ամմէն քրիստոնէի պէ՛տք է բերան գիտնալ և ըսել, և իւր զաւակացը սորվեցընել։

Պահքն ի՞նչ է։

Պահքն է, որ մարդ իւր անձը կը նեղէ, և զինքը կարգիլէ՝ փափուկ, պարարտ, և գիրցընող կերակուրներէն, այն օրերը՝

որ սուրբ եկեղեցին սահմաներէ։

Ասկից ուրիշ պահք կա՞յ մի։

Այո՛ կայ ուրիշ հարկաւոր պահք մի, որ կրսվի ներքին պահք. և այս է, որ մարդս կը պահէ իւր սիրտը և միտքը չար մտածմունքէն. բերանը՝ հայհոյութիւն և սուտ խօսելէն. աչքը՝ գէշ նայելէն. ականջը՝ առասպել խօսք և բանբասանք լսելէն. ձեռքը՝ չար գործելէն։

Ողորմութիւնն ինչ է։

Ողորմութիւնը այն է. որ կարօտեալ և խղճալի մարդոյ օգնութիւն կընեմք, և նեղութենէն կազատեմք։

Ողորմութիւնը քանի՞ կերպ է։

Երկու կերպ. մէկը մարմնաւոր, և մէկը հոգևոր։

Որո՞նք են մարմնաւոր ողորմութիւն։

Այս եօթն են. կերակրել զքաղցեալս. արբուցանել զծարաւեալս. զգեցուցանել զմերկս. ժողովել զօտարս և զղա-

րիպս. ի տես գնալ հիւանդաց. երթալ մխիթարել զբանտարգեալս. թաղել զանտէր մեռեալս։

Որո՞նք են հոգևոր ողորմութիւն։

Այս եօթն են. բարի խորհուրդ տալ երկմիտ մարդուն. խրատել և սորվը ցընել տգէտը. յանդիմանել և չեխել մեղքէն ետ չի դարձողը. ցաւակից ըլլալ և մխիթարել տրտումը. ներել ընկերին յանցանքը և սուչը. համբերել նեղութեան, և դժգոհանք չընել. աղօթք ընել հաւասար կենդանեաց և մեռելոց համար։

ԳԼՈՒԽ · Դ

Աստուծոյ օրէնքը կամ պատուիրանքը քանի՞ է։

Աստուծոյ պատուիրանքը տասն է. և մովսէս մարգարէին ձեռօքը տուաւ ած սինա լեռը, երկու քարեղէն տախտակի վերայ գրած։

Ո՞րն է առաջին պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Առաջինն է այս. Լսա՛ Իսրայէլ Տէր Աստուած մեր. Տի՛ Եղիսէն Տէր Աստուած բաց յինէն։ Լսա՛ այս հրամանս մեզ կը պատուիրէ, մի միայն երկնի և երկրի՝ և ամենայն եղելոց արարիչ աստուածը հաւատալ, և ուրիշը չի պաշտելը։

Ո՞րն է երկրորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Երկրորդն այս է. Մի՛ արասցես քեզ կուռք ամենայն նմանութեան. Տի՛ երկիրպագանիցես նոցա. և Տի՛ պաշտեսցես զնոսա։ Լսա՛ այս հրամանս կը պատուիրէ, ոսկի, արծաթէ, քարէ վասյտէ, և կամ այլ ինչ նիւթէ կուռք չի շինելը, և անոր երկրպագութիւն չընելը։ Ուստի ագահ մարդը, որ ոսկին ու արծաթը չափէն աւելի կը սիրէ ու պատուէ, կռապաշտ կը սեպվի. անոր համար պօղոս առաքեալը կը գրէ. Ի բաց ընկիցէք զագահութիւն, որ է կռապաշտութիւն։

Մեկ անհաւատը թէ որ հարցնէ, հապա ինչու՞ պատկերը կը չունէք, և անոր երկրպագութիւն կընէք։

Ասոր ըսէ թէ, մենք պատկերքը ած է չենք ըսեր, քաւ լիցի. այլ պատկերքը տեսնալով, անոր տէրը միտք կը բերենք։ Եթէ սրբոց պատկերքն է, խոնարհութիւն և պատիւ կընենք. և այն սուրբը մեզի բարեխօս կը բռնենք։ Եւ եթէ տէրունական և աստուածային պատկեր է, ծնրադրութիւն և երկրպագութիւն կընենք. և այս մեր ըրած խոնարհութիւնը և երկրպագութիւնը՝ պատկերքին տէրոջը կը վերաբերի. անոր համար ձեռագործ պաշտօղ չենք, այլ ճշմարիտ աստուածապաշտենք։

Ո՞րն է երրորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Երրորդ պատուէրն է. Ա՛յ տ-ն-ո-ց-ս ը-ն-ա-ն պ-ե-տ-ն ՝ց՝ ՝ի վերայ անոպ-ե-ց։ Եւ այս հրամանս մեզ կը պատուիրէ, ՝ց՝ երկրպագելի անունը՝ դատարկ տեղն չի յիշենք. կամ սուտ բանի համար վկայ

չի բերենք։ Օ էրէ ունայն և ոչինչ խօսքի համար՝ այ ահեղ անունը յիշելը՝ սուտ երդում ընել է։ Լաւ՝ այն քրիստոնեայն որ անունով միայն քրիստոնեայ է, և մըկրտութեան շնորհք և քրիստոնէի գործք չունի, այ անունը 'ի վերայ սնոտեայց առնօղ է։

Ո՞րն է չորրորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Չորրորդն է. Յիշեսցէր զօրն շաբաթոյ պրէել զնա։ Լաւ այս պատուէրը մեզի կը սորվեցընէ, վեց օր մարմնաւոր գործ ընել, և մէկ օր հանգչիլ, և աստուծոյ փառաբանութեան և աղօթից և հոգևոր գործոց պարապիլ։

Աստուած շաբաթ օրը պատուիրեց հանգչիլ, ինչպես սուրբ առաքեալները կիրակի օրը սահմանեցին։

Պատճառն այս է. զերէ քրիստոս տէրն մեր կիրակի օրը յարութիւն առաւ, և մեզի սատանային ծառայութենէն ազատեց. և 'ի պատիւ քրիստոսի յարութիւնը

սահմանեցին սուրբ առաքեալները՝ կիրակի օրը ծառայական գործքէ ազատ կենալ։

Ո՞րն է հինգերորդ պատուէրը, և անկէց ինչ պիտի սորվինք։

Հինգերորդն է. Պատուէ՛ հայր քո և մայր քո. զի երեր երեսուն լինիցես՝ ի վերայ երկրի բարու-թեան։ Այս պատուէրըս մեզի կը սորվեցնէ, թէ ծնողքդ պատուէ խոնարհութեամբ և պատկառանքով. անոնց հարկաւոր պէտքը քո կարողութեանդ չափ հոգայ, և մի տրտմեցներ. որ աստուած քեզի բարի ընէ, և շատ ապրիս։

Այս պատուէրէն այլ ինչ կիմացվի։

Հայր ըսելով՝ կիմացվի ամենայն երախտիք և բարութիւն ընողները. ինչպէս՝ թագաւորը, իշխանը, վարդապետը, վարժապետը. և անոնք ամենայն՝ որ հոր պէս գութ և խնամք ունին մեր վրայ, և մեր աղէկութեանը պատճառ կըլլան։

Ո՞րն է վեցերորդ պատուէրը, և անկէց մինչ պիտի սորվինք։

Վեցերորդն է. Մի՛ սպանանիր։ Լու այս հրամանս կարդիլէ՝ առանց իրաւանց մարդ ըսպանանելը. ինչպէս՝ որ դատաւոր չէ, իշխանութիւն չունի, և մարդ կըսպանանէ. և կամ թէ իշխանութիւն ունի, և դատարկ տեղն կըսպանանէ։ Լու չիւնքի մարդասպանութիւնը շատ անդամ յառաջ կուգայ բարկութենէն. անոր համար քրիստոս տէրն մեր հրամայեց, թէ մի՛ բարկանայք. և ըսաւ՝ թէ Լ՚Մենայն որ բարկանայ եղբօր իւրոմ պարապարպոյ, պարպարորդ լեսի գեհենոյն։

Քանի՞ կերպ է մարդասպանութիւնն։

Լրկու կերպ է. մէկը մարմնաւոր է, որ մարդոյ մարմինը և հոգին մէկըզմէկէ կը բաժանէ. և մէկալը հոգեւոր է, որ իւր հաւատակից եղբայրը և ընկերը կատէ. ասոր համար կըսէ յովհաննէս աւետարանիչը. թէ Որ ապէ զեղբայր իւրոյ՝ մարդասպան է։

Ո՞րն է եօթներորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Եօթներորդն է. Մ՚Է ընար։ Եւ այս հրամանս մեզի կարգիլէ ամէն չար գործքէ. որով կը խրատիմք, պարկեշտ և սուրբ պահել մեր հոգին և մարմինն։

Ո՞րն է ութերորդ պատուէրը և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Ութերորդն է. Մ՚Է գողանար։ Եւ այս հրամանս մեզի կարգիլէ այն ամէն բանէն որ օտարի է՝ չը գողանալ, և չը յափշտակել, ոչ ծածուկ, և ոչ յայտնի։

Ուրիշ կերպ գողութիւն ալ կայ մի։

Նաև գողութիւն կը սեպվի՝ բանվորին վարձքը օրէ օր ձգել. կամ էվել պակաս չափ գործ ածել. կամ լաւը ցրցրնել, և գէշը տալ։ Եւ գիտցիր, որ այլ մեղքերը ապաշխարանքով կը ջնջվին, այլ գողութիւնն 'ի տէրն պիտի դառնայ։

Ո՞րն է իններորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Իններորդն է. Մ՚Է ասար վկայեր ընկերէ

խոՀՄԷ։ Լ,ու այս Հրամանս մեզի կարդիլէ այն ամէն բանէն, որուն աղէկ տեղեակ չենք, վկայութիւն չի տանք։

Ուրիշ կերպ սուտ վկայութիւն ալ կա՞յ մի։

Այո՝ սուտ վկայ են բանբասողները՝ որ ընկերին բարի անունը կապականեն։ Սուտ վկայ են բանսարկութիւն ընողները, որ տարաձայնութիւն և կռիւ կը ձգեն՝ տան և ընտանեաց մէջ, բարեկամի մէջ, ընկերի մէջ, և այլն։ Սուտ վկայ է մարդահաճոյն, այսինքն, Ո՞ւրոյէ խօսողն որ աչքէ չելլալու համար, սուտ խօսքերուն՝ այո՛ այդպէս է կըսէ։ Դաւիթ մարգարէն զայսպիսի մարդն կանիծէ ասելով. Ապրուածք ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից։ Ուստի ամէն սուտ խօսողները՝ որդի սատանայի կը կոչէ տէրն մեր, զէրէ կըսէ. Որ սո՛ւտ խօսէ, յիւրոյ անպէ խօսէ. զէ սուտ է և հայր նորա սատանայ. և կը պատուիրէ, Թէ եղէցէք բան յեր, այո՛ն այո՛.

Ո՞րն է տաներորդ պատուէրը, և անկէց ի՞նչ պիտի սորվինք։

Տաներորդն է. Մի՛ յանկանար փան ընկերի չո, և մի՛ անդրոյ նորա. մի՛ յանկանար կնոջ ընկերի չո, և մի՛ ծառայոյ նորա. և մի՛ ամենայնի զինչ ընկերի չո իցէ։ Լու այս հրամանաւս կարգիլէ աստուած մեր սիրտը՝ ամէն կերպ չար ցանկութենէն. և բաւական պիտի համարիմք այն, որ ինչ ած մեզի տվեր է, թէ տուն, և թէ այլ ինչ ստացուածք։ Օ էրէ ցանկութիւն՝ մեղք կը ծնանի. և մեղքը՝ մահ և դատապարտութիւն կը բերէ։ Լու որովհետև սրտին դուռը՝ մարդոյս աչքն է. պէտք է որ աչքերնիս զգուշութեամբ պահպանեմք. որ ցանկութիւնը դողի նման սրտերնիս չի մտնայ, և մեր հոգին չըսպանանէ։

Ո՞րն է ամէն պատուիրանաց կատարումը։

Ամէն օրինաց և պատուիրանաց կատարումը սէրն է. ինչպէս պօղոս առաքեալը կը գրէ, եթէ Լրո՞ն օրինաց սէր է, ի

սուրբ սրբէ, և ի տպաց բարեաց, և յանկեղ ծաւոր հաւատոց։

Առաջ ով պիտի սիրեմք։

Նախ և առաջ պարտաւոր եմք զձեզ սիրել. որ մեզի ստեղծեր է, և կը խնամէ։ Ահա հայր ձեզ զորդին միածին աշխարհք խրկեց մեզի փրկելու համար։ Որդին միածին եկաւ, մարմին առաւ, մեզի փրկեց։ Հոգին սուրբ իւր շնորհքը մեզ կուտայ, որ ճշմարտութիւնը ճանաչեմք, և բարին կամենամք։

Երկրորդ՝ ով պիտի սիրեմք։

Երկրորդ՝ մեր անձը պիտի սիրեմք. մեղքէն հեռի պահեմք. բարի գործեմք. որ աստուածային ողորմութեանը և արքայութեանը հասնիմք։

Երրորդ՝ ով պիտի սիրեմք։

Երրորդ՝ մեր ընկերը պիտի սիրեմք՝ մեր անձին նման. զերեւ մէկ աւազանէ ծրն եալ եղբայր եմք. մէկ հաւատք, մէկ մկրտութիւն ունիմք. և մէկ արքայութի

պիտի երթամք։ Եւ սուրբ առաքեալը կըսէ թէ, ով որ իւր եղբայրը կատէ, մարդասպան է։

ԳԼՈՒԽ · Ե

Սուրբ եկեղեցւոյ խորհուրդը ի՞նչ է։

Եկեղեցւոյ խորհուրդը՝ աստուծոյ անտեսանելի շնորհացը արտաքին և զգալի նշան մի է, որ անով ճշմարտին շնորհքը մեզի կը տրվի։

Քանի՞ է։

Եօթն է, այսինքն՝ մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն, ապաշխարութիւն, վերջին օծում, կարգ, պսակ։

Մկրտութիւնն ի՞նչ է։

Մկրտութիւնն՝ վերըստին և հոգևոր ծնունդ մի է. որ սուրբ աւազանին մէջը մեր մարմինը կը լուացվի ջրով՝ յանուն հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ. և մեր հոգին կը մաքրի յաղամայ սկզբնական մեղքէն։

Դրոշմն ի՞նչ է։

Դրոշմն է օծումն սրբալոյս մեռոնին, որ օծեալ և կնքեալ կըլլայ մկրտեալն. և այս անջնջելի նշանովը քրիստոսի զօրապետին յատուկ զինուոր կը լինի։

Քանի՞ տեղ օծում կըլլայ մկրտեալ տղային։

Ինը տեղ, այսինքն՝ ճակատը, աչքը, ականջը, հոտոտելիքը, բերանը, ափը, սիրտը, քամակը, ոտքը։

Այս օծումը կամ կնիքը ի՞նչ զօրութիւն ունին։

Ճակատին կնիքը՝ համարձակութի՛ւն կուտայ քրիստոսի սուրբ հաւատքը աներկիւղ դաւանիլ։ Աչքին կնիքը՝ հոգւոյ աչքը կը լուսաւորէ, որ միշտ արթուն և պատրաստ մնայ։ Ականջաց կնիքը՝ հոգւոյ ականջը կը բանայ, որ ճշմարիտ պատուիրանքը լսէ։ Հոտոտելեաց կնիքը՝ յաւիտենական կենաց անմահական հոտոյն՝ հոգին կը զմայլեցընէ։ Բերանին կնիքը՝ պահապան կըլլայ բերնին, որ չար չի խօսի։ Ափին կնիքը՝ զօրութիւն

և ոյժ կուտայ ձեռքին, որ բարի գործէ։ Արտին կնիքը՝ հոգին կը սրբէ, կը նորոգէ, և կը հաստատէ, որ միշտ բարի խորհի։ Համակին կնիքը՝ վահան՝ այսինքն խաչխան կը լայ կը ռնակը, որ սատանային նետը չի խոցէ։ Ոտից կնիքը՝ ոտքերը կուղղէ, որ արքայութեան ճանապարհը երթայ։ Այս այս կնիքներըս մէյմէկ ահաւոր զէն կը լան մկրտեալ տղային, որ անոնցմով կը պատերազմի սատանայի՝ և մարմնոյ՝ և աշխարհի դէմ, և կը յաղթէ. և քրիստոս թագաւորէն անթառամ պսակ կառնու։

Հաղորդութիւնն ինչ է։

Հաղորդութիւնն՝ քեզի սուրբ մարմնոյ և արեան խորհուրդն է, որ արտաքին տեսութեամբ հաց և գինի կերևնայ, այլ իսկապէս քրիստոս է. և մեք անոր ճաշակմամբը՝ կեանք և կենդանութիւն կը ստանամք։ Այս՝ քրիստոսի սէրը մտքերնիս կը բերեմք և կը յիշեմք, թէ

մեզի այնքան սիրեց, մինչև որ իւր մարմինը և արիւնը մեզի հոգևոր կերակուր և ըմպելի տուաւ, որով մեր հոգին կենդանի կըլլայ։

Ես կը հաւատամ, թէ սրբագործեալ նշխարքն իսկապէս քրիստոս է. միայն զայս կուզեմ սորվիլ, երբ որ քահանայն մէկ նշխարքը մասն մասն կը բաժանէ, ի՞նչպէս ամբողջ կը մնայ մէկ քրիստոս այն բաժանեալ մասանց մէջը. ուստի կը խնդրեմ ինձ մէկ օրինակ մի տալ որ խելքս հասնի։

Քեզի օրինակ ահա արեգակը, որ մէկ հատ է աշխարհքիս մէջ, և մէկ կերևնայ ամբողջ հայելիին մէջը. և եթէ կտոր կտոր ընես այն հայելին, մի և նոյն արեգակն է, որ կերևնայ ամէն մէկ կտոր հայելիին մէջը, և իւր ամբողջութիւնը չի կորսընցներ. այսպէս մէկ քրիստոս է ամբողջ նշխարքին մէջ, և բեկեալ մասանց մէջ։

Ապաշխարութիւն ի՞նչ է։

Ապաշխարութիւն է, իւր գործեալ մեղքը լալ, և կամաւոր պատիժ կրել։

Քանի՞ բան պէտք է ապաշխարութեան։

Չորս բան. առաջինն է՝ զղջումն գործեալ մեղքին։ Երկրորդն է՝ առաջադրութիւն կրկին անգամ չի գործելոյ։ Երրորդն է՝ ճշմարիտ խոստովանութիւն առաջի քահանային։ Չորրորդն է՝ կատարեալ վճարումն դրած ապաշխարանքին։ Եւ այս սուրբ խորհուրդը՝ քահանային արձակում տալովը կը ջնջէ բոլոր ներզործական մեղքերը, եթէ մահացուն, և եթէ ներելին։

Վերջին օծումն ինչ է։

Վերջին օծումը՝ հոգւոյ և մարմնոյ առողջարար դեղ մի է, որ քահանայական աղօթքին զօրութեամբը ծանր հիւանդները կը բժշկէ, և անոնց ներելի մեղքը կը քաւէ։

Հայոց սուրբ եկեղեցին վերջին օծման խորհուրդը կը կատարէ՞ մի։

Այո՛ ծանր հիւանդներուն վերայ քանի անգամ հարկաւորինէ՝ կը կատարէ. և

այս սուրբ խորհուրդն է՝ որ կրսվի գիշեր-
ծամ. ուր քահանայքն կը կարդան սաղ-
մոս , գիրք , բժշկութեան աւետարան ,
աղօթք . և յետոյ փարատեցո՛ զցաւս
կրսեն։

Մի թէ օրհնեալ իւղով հիւանդը օծել հարկաւոր է։

Իւղով օծել՝ ազգային ծէս , և խորհրդա-
կան արարողութիւն մի է , և հաւատոյ
մաս չէ , անոր համար իւղոյ գործածու-
թիւնն հարկաւոր չէ . զերէ սասանկ ծի-
սական արարողութիւններ ամէն քրիս-
տոնեայ ազգի մէջ՝ կը լլլայ որ կը փո-
փոխվին , և կը լլլայ որ կը խափանին։ Իսկ
բուն զօրութիւնը այս խորհրդոյս է քա-
հանայական աղօթքը և ընթերցուածքը .
և այն է հաւատոյ մասը և հարկաւորը ,
և այս ամենևին չի խափանիր . ինչպէս կը
դրէ մեծն խոսրով ժամագրքի մեկնու-
թեան մէջը , 281 երեսը։ Ուստի կրսէ
յակոբոս առաքեալն , թէ Ընդ[illegible]ն հա-
պովք երիցսցեն զաշխատելն։

Քահանայութեան կարգն ինչ է։

Քահանայութեան կարգը հոգևոր իշխանութիւն մի է, որ 'ի հոգւոյն սրբոյ կառնու ձեռնադրեալն. և իշխանութիւն կունենայ պատարագ մատուցանել, անդարձ մեղաւորը կապել, և զղջացող մեղաւորին արձակում և թողութիւն տալ։

Պսակն ինչ է։

Պսակն՝ եկեղեցւոյ սուրբ խորհուրդ մի է, որ այրը և կինը սուրբ սիրով և հաւատարմութիւն կը կապակցէ միմեանց հետ. որ զաւակ ծնանին, և քրիստոսի եկեղեցին աճեցուցանեն։

ԳԼՈՒԽ · Զ

Բարոյական առաքինութիւնք քանի՞ են։

Չորս են. այսինքն՝ խոհեմութիւն, արիութիւն, արդարութիւն, և բարեխառնութիւն։

Խոհեմութիւնն ինչ է։

Խոհեմութիւնն է, որ անով Հայրը՝ բարին

կը ճանաչեմք, և մէկզմէկէ կը զատեմք. և ամէն ընելու բաներին՝ ըստ արժանւոյն կը տնօրինեմք։

Արիութիւն ինչ է։

Արիութիւն է, որ անով ամէն դժուարութեան, և աշխարհքի փորձութեան համբերութեամբ կը յաղթեմք՝ ոչ յաջողութիւն ժամանակը կը հպարտանամք, և ոչ ձախողդութեան ժամանակը կը տրտմիմք։

Արդարութիւն ինչ է։

Արդարութիւն է, որ անով ամէն մարդոյ արժանի և վայելուչ եղածը կընեմք. թէ պատուել պէտք է՝ կը պատուեմք, թէ վախնալ արժան է՝ կը վախնամք, թէ ողորմելու կարօտ է՝ ողորմութիւն կուտամք։ Այս այս արդարութիւն է, որ մեզնէ մեծին պատիւ ընեմք. մեզ հաւասարին հետ սիրով կենցաղավարիմք. մեզնէ պզտիկին խնամք և դթութիւն ընեմք։

Բարեխառնութիւնն ինչ է։

Բարեխառնութիւնը՝ ամմէն անկարգ ցանկութեան սանձ և իւլարն է. որ առնով չար ցանկութիւնը կը խափանի։

Այս ըսած առաքինութիւններդ ամմէն ազգի՝ և ամմէն մարդու հասարակ է. քրիստոնէի յատուկ եղած առաքինութիւն ալ կայ մի։

Այո՝ կայ, որ քրիստոս տերը ինքն ըրաւ, և մեզ սորվը ցուց. և է այս չորսը. խոնարհութիւն, սէր, համբերութիւն, և ներողութիւն։

ԳԼՈՒԽ · Է

Քանի՞ առաքինութիւն կայ, որ անոնք գործելով երանութեան արժանի կը լայ մարդս այս աշխարհքիս մէջ, և վերջապէս երանութիւն կը գտնայ արքայութեան մէջ։

Ութը կերպ առաքինութիւն կայ, որ կը սալին ո՛ւ երանո՛ւթիւն։

Ո՞րն է առաջին երանութիւնն։

Առաջինն է, հոգւով աղքատ ըլլալ. այսինքն՝ մարդս իւր ունեցած մարմնա-

ւոր սաստցուածքը բանի տեղ չի սեպել, և անով չի հպարտանալ, և չունենալուն համար չի տրտմիլ։

Ի՞նչ է երկրորդ երանութիւնը։

Երկրորդն է, հեզ ըլլալ. այսինքն՝ եթէ մէկը իւրեան թշնամութիւն ընէ, անոր դէմ չի բարկանալ, քէն չի պահել, և թշնամութիւն չընել. այլ փոխարէնը բարի ընել։

Ի՞նչ է երրորդ երանութիւնը։

Երրորդն է, սգաւոր ըլլալ. այսինքն՝ իւր մեղքը լալ և սգալ. և այսպէս լալով իւր կորուսեալ հոգին գտնալ։

Ի՞նչ է չորրորդ երանութիւնը։

Չորրորդն է, քաղցեալ և ծարաւի ըլլալ արդարութեան. այսինքն՝ ինչպէս անօթի մարդը հացին, և ծարաւ մարդը ջրոյն կը փափագի. այնպէս փափագիլ արդարութեան։

Ի՞նչ է հինգերորդ երանութիւնը։

Հինգերորդն է՝ ողորմած ըլլալ. այսինքն՝

թէ հոգեւոր և թէ մարմնաւոր ողորմութիւն՝ կարօտեալ և խղճալի մարդոյն ողորմիլ։

Ի՞նչ է վեցերորդ երանութիւնը։

Վ Եցերորդն է, սիրտ սուրբ ունենալ. այսինքն՝ սիրտը մաքուր հայելիի պէս պահել, որ զՅԱԾ տեսնալու արժանի ըլլայ։

Ի՞նչ է եօթներորդ երանութիւնը։

Լ,ՕԹՆԵՐՈՐԴՆ Է, խաղաղարար ըլլալ. այսինքն՝ մէկը զմէկու մէջ եղեալ թշնամութիւնը և ատելութիւնը վերցունելու ջանք ընել, և խաղաղութի՛ հաստատել. և այսպիսի մարդն՝ որդի աստուծոյ կը կոչվի. զէրէ նման կըլլայ որդւոյն ՅԱ, որ մեր և ՅԱ մէջ եղեալ թշնամութիւը՝ իւր խաչելութեամբն վերցուց, և խաղաղութիւն ըրաւ։ Ուստի ո՛վ որ խռովութիւն կը սերմանէ՝ որդի սատանայի է. և քնի խաչը և մահը՝ անպըտուղ կընէ։

Ի՞նչ է ութերորդ երանութիւնը։

ՈՒԹԵՐՈՐԴՆ Է, արդարութեան համար հալածում կրել. այսինքն՝ ամէն կերպ

ներզութեան համբերել, թէ հաւատոյ, թէ ճշմարտութեան համար. ահա քրիստոս տէրը՝ ճշմարտութեան համար աշխարհք եկաւ արիւն թափեց. ինչպէս իւր սուրբ բերանովը կը վկայէ, թէ Յոյն էսկ էկէաւ էմ, չէ վկայէցէց ճշմարտութեան։

ԳԼՈՒԽ · Ը

Մեղքն քանի՞ կերպ է։

Երկու կերպ է. սկզբնական և ներգործական։

Ո՞րն է սկզբնականն։

Սկզբնական մեղքն է, որ ադամ նախահայրէն սերեալ ունիմք ամմէնքս։ Եւ այս կը ջնջվի սուրբ մկրտութեամբ։

Ո՞րն է ներգործականն։

Ներգործական մեղքն է, որ յետոյ մեր կամաքը չար կը գործեմք։ Եւ այս կը ջնջվի զղջմամբ, խոստովանութեամբ, և ապաշխարութեամբ։

Ներգործական մեղքը քանի՞ կերպ է։

Երկու. ներելի և մահացու։

Ներելի մեղքն ի՞նչ է։

Ներելին է այն՝ որ ըստ ինքեան թեթև մեղք է. կամ որ տկարութեամբ կամ չգիտութեամբ չար կը գործեմք և այ սերը սրտերնուս մէջը ունիմք։

Մահացու մեղքն ի՞նչ է։

Մահացուն այն է՝ որ ըստ ինքեան մեծ մեղք է, կամ որ յոժար կամօք և գիտութեամբ չար կը գործեմք, և այ սէրը սրտէ կը հանեմք։

Գլխաւոր մահացու մեղքերը քանի՞ են։

Լ.օթն են. այսինքն՝ հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութի, ագահութի, որկրամոլութի, և բղջախոհութի։

Ո՞րն է մեղք զանցաւութեան, և ո՞րն է մեղք առնելութեան։

Օ այս գիտցիր, որ այ պատուիրանաց ոմն յանձնառական է, որ կը պատուիրէ թէ ըրէ, ինչպէս՝ Պատուէ՛ զՏայր քո և զՄայր։ և ոմն հրաժարական է, որ կարգիլէ, թէ մի՛ ըներ. ինչպէս՝ Մի՛ ասպանա-

ներ , մի՛ գողանար։ Ահա եթէ յանձնառականը զանց առնեմք չի կատարեմք , կըսվի մեղք ղանցաւորութիւն։ Եւ եթէ հրաժարականէն հեռի չի կենամք և ասուծոյ հրամանին դէմ գործեմք , կըսվի մեղք սուանիլութիւն։

Քանի՞ հարկաւոր բան կայ մըտքերնիս պահելու , որ մեղքէ հեռի մնամք։

Այս չորս բանս է . մահն . դատաստանն . դժոխքն . և արքայութիւնն։

ՎԵՐՋ



0
0 0 0
280
10
290

2013 5013-5016